Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

23369

[illegible]
[illegible]
1865

398.5
Կ-60

19

Ի ԳՐՈՑ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
Գ. Գ. Հալլաճեանց.
Թ. 151, Գինն 50 կ.

2010

12002

398.5
4-60
uy

# ՎԻՃԱԿԱԽԱՂ

## ԶԲՕՍԱՆԱՑ

Հին ձեռագրէ անյայտ Հեղինակի։



1865

Ռաֆայէլ Պատկանեանի Տպարանում

Սանկտպետերբուրգ

3969

40191 ան.



Ազգասէր մարդիկ՝ ժողովրդեան մտաւոր ուժին նպաստելու դիտմամբ՝ շատ հնարներ էին գործ ածում. ամենքը աստուածաբանական և իմաստասիրական առարկաներով չէին պարապում: շատը կային՝ որ ժողովրդեան մըտաց կարողութեան համեմատ միջոցներ էին պէտք բերում. —գիտնականաց համար ծանր առարկաներ, իսկ հասարակաց համար զբօսանքներ գոյացնելով:

Այսպէս Ներսէս Շնորհալին՝ որ պարծանք էր աստուածաբանից, շատ անգամ թողնելով բարձրագոյն առարկաները՝ ժողովրդեան համար առեղծանելիքներ էր շարադրում, այն պատճառաւ՝ որ ժողովուրդը փոխանակ այն առեղծանելիքները օտար լեզուաւ գործ ածելու, իւր մայրենի լեզուով գործ ածէ և խաղալով միտքը սրէ: Եւ ազգը այժմ տեսնում է յայտնի՝ թէ այն ազգասէր անձը ազգի մէջ դպրութիւնը և ժամանակի յարմար գաղափարները տարածելու և ծաղկեցնելու համար ի՞նչ հնարներ է գործ դրել: Եւ ով գիտէ՝ թէ որքան է եղել այն առեղծանելիքների թիւը, և մեզ՝ որքանն է հասել և որքանն է ամենածախ ժամանակը կուլ տուել և որքանն է մարդոց անզգուշութիւնը արդի համազգիների

համար անդարձ անյայտութեան մատնել։

Աներկբայ է՝ որ եղել են մեր ազգի մէջ այնպիսի մարդիկ էլ՝ որ այն ազգասէր Հայրապետի նման՝ ուրիշ ուրիշ ճանապարհներով են ուզեցել ազգի մէջ նոյն դպրութեան և ժամանակակից գաղափարների ծաւալման համար աշխատել, ինչպէս որ այս ՎԻՃԱԿԱԽԱՂԻ հեղինակն է եղել։

Մեզ յայտնի չէ, թէ սորա անյայտ հեղինակը ինքն-էլ հաւատացե՞լ է այս գրածներուն՝ թէ ոչ, կամ այն մտքով է գրել՝ որ այլք կարդան և հաւատան, թէ՞ այն մտաքով է միայն գրել՝ որ կարդան և զբօսնուն։

Այլ որովհետև այսպիսի՝ նախնեաց աշխատանք և քան զոսա հարիւրապատիկ և հազարապատիկ լաւերը ևս՝ շատ են կորել, մենք ունենալով դիտուկ ժամանակ պահելու և ազգին մէկ փոքրիկ ծաղկափնջակի նման նուիրելու, չուզեցինք որ այս-էլ շատերի նման կորչի. այլ յօժարեցանք ի լոյս ընծայել, ո՛չ այն մտքով՝ որ կարդացողը նախապաշարմանց մէջ ընկնի, այլ այն մտքով՝ որ զբօսնու և զբօսանաց ժամանակն-ալ բարոյական խրատներ պարունակող խօսքերու մէջ պարապմունք գտած լինի։

Մեր ազգի մէջ, համարեա՛ թէ ամենայն Հայաբնակ քաղաքներումը կայ վիճակախաղ,

24162-60

որոց աղաւաղուած խօսած կայ այլ տեղ: Կընդուրում կե՜յ, ծառն կընդուրում՝ մանկութեան օրերից ըն-կած լսել ենք թէ Հաշտարխանումը, թէ Ղզլարումը, թէ Մոզդոկումը, թէ Նախիջևանումը, թէ Ղրիմումը և թէ Պօլսումը և ուրիշ շատ տեղեր:

Բայց այս վիճակախաղը այն կարգի մէջ չէ․ սա չէ պահանջում ժողոտանքներ, երգեր, ծախքեր․ ամէն մարդ իւր պարապ ժամանակը կարող է սրանով զբօսնուլ անվնաս․ շատը բակլայով են զբօսնում կամ խաղաքարով: Սորա անվնասակար լինելը՝ աւելի այն տեղէն է յայտնի, որ ամէն ազգ ունի և ամէն ազգի գիտնականք ուզեցել են ժողովուրդի բերնէն հաւաքել և պատմութեան և գրականութեան աւանդել, որ հասարակաց ստացուած դառնայ ազգի համար, ինչպէս և արել են իսկ․ և մենք այժմ տեսնում ենք՝ որ ազգային վէպքերի, երգերի, առակների, առածների, զրոյցների և առեղծանելիքների հետ միասին սա-էլ ունի իւր յատուկ տեղը ազգային գրականութեան և աւանդութեանց մէջ․ և մենք չենք կամենում, որ այս ազգային մտաւորական ըզբօսանքը, որոց նման շատերը և աւելի լաւերը, հարկաւորները և գերազանցներն են կորել, կորած լինին մեր յետնորդաց հա-

մար, որոնց մէջէն կարելի է՝ թէ գտանելըն այնպիսի հետաքրքիր անձինք՝ որ կամենան իմանալ՝ թէ նորա նախորդները կամ նոցա նախնիքը ինչերով են անցուցել իրանց պարապութեան ժամանակը և ինչ է եղել նոցա տունին գերդաստանական անմեղ զբօսանքը.

Տպագրութեան ժամանակը մէկ-քանի օտարոտի բառեր մէջէն փոխեցինք մենք և չկարողացանք ըստ ամենայնի նոյնութեամբ աւանդել. մէկ քանի տեղ հին ձևերու փոխարէն ընկան նոր տառականներ՝ որ դեռևս չկային և այն ժամանակի մարդիկ նոցա համար անգիտութիւն անգամ չունէին:



Ծովի վերայ է մեր նաւակ . . . .
Արդեօք ուր է իւր նպատակ:

## Կենաց Աշխտակ և Բաղդի Վիճակ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 86 | 90 | 94 | 98 | 36 | 100 | 97 | 93 |
| 82 | 53 | 57 | 61 | 34 | 60 | 56 | 52 |
| 78 | 49 | 43 | 39 | 32 | 38 | 42 | 48 |
| 11 | 13 | 15 | 17 | 19 | 21 | 23 | 25 |
| 8 | 6 | 4 | 2 | 1 | 3 | 5 | 7 |
| 30 | 28 | 26 | 24 | 22 | 20 | 18 | 16 |
| 75 | 46 | 44 | 40 | 31 | 41 | 45 | 47 |
| 72 | 51 | 54 | 58 | 33 | 59 | 55 | 50 |
| 69 | 67 | 65 | 63 | 35 | 62 | 64 | 66 |
| 83 | 87 | 91 | 95 | 37 | 99 | 96 | 92 |
| 89 | 79 | 9 | 76 | 68 | 85 | 77 | 10 |
| 81 | 27 | 14 | 73 | 88 | 80 | 29 | 12 |
| | | 74 | 71 | 70 | 84 | | |

Երկու մատամբք առ մէկ գնտակ,
Ա՛րկ խորհրդով յայս Աշխտակ.
Մըտի՛ր թուով մէջ պատկերաց,
Ա՛նդ գտցես քո վիճակ կենաց։

| | | | |
|---|---|---|---|
| 1<br>Յոպոպ<br>31 | 9<br>Եկեղեցի<br>82 | 17<br>Օ՝<br>66 | 25<br>Թ՝<br>38 |
| 2<br>Ը<br>3 | 10<br>Ցուլ<br>41 | 18<br>Ոչխար<br>45 | 26<br>Ճուն<br>38 |
| 3<br>Էշ<br>47 | 11<br>Պ՝<br>22 | 19<br>Ղ՝<br>50 | 27<br>Թուր<br>57 |
| 4<br>Ր՝<br>28 | 12<br>Դանակ<br>86 | 20<br>Ծիծեռ<br>15 | 28<br>Ժ՝<br>81 |
| 5<br>Օձ<br>17 | 13<br>Դ՝<br>71 | 21<br>Ւ<br>75 | 29<br>Իժ<br>90 |
| 6<br>Գայլ<br>55 | 14<br>Լուղորդ<br>9 | 22<br>Բու<br>92 | 30<br>Գորտ<br>7 |
| 7<br>Զանգակ<br>61 | 15<br>Ն՝<br>62 | 23<br>Ընձուղտ<br>67 | 31<br>Ի<br>72 |
| 8<br>Մեղու<br>74 | 16<br>Աղաւնի<br>14 | 24<br>Հաւ<br>94 | 32<br>Աղուէս<br>13 |

| | | | |
|---|---|---|---|
| 33<br>Ց<br>58 | 41<br>Խող<br>63 | 49<br>Ջ<br>80 | 57<br>Ճնճղուկ<br>68 |
| 34<br>Այծ<br>27 | 42<br>Հողագործ<br>23 | 50<br>Ջայլամն<br>10 | 58<br>Մ<br>87 |
| 35<br>Լ<br>42 | 43<br>Կ<br>37 | 51<br>Ղ<br>11 | 59<br>Տուն<br>48 |
| 36<br>Աւանակ<br>36 | 44<br>Լուսայար.<br>56 | 52<br>Պտուղք<br>44 | 60<br>Լապտեր<br>35 |
| 37<br>Խ<br>54 | 45<br>Սամոյր<br>60 | 53<br>Մանուկ<br>65 | 61<br>Ձուկն<br>53 |
| 38<br>Արագիլ<br>5 | 46<br>Կանթեղ<br>78 | 54<br>Կով<br>18 | 62<br>Ն<br>33 |
| 39<br>Ծ<br>76 | 47<br>Հ<br>19 | 55<br>Ճ<br>46 | 63<br>Եղն<br>2 |
| 40<br>Ագռաղ<br>29 | 48<br>Հրեշտակ<br>40 | 56<br>Վարդ<br>32 | 64<br>Ն<br>75 |

| | | | |
|---|---|---|---|
| 65<br>Փունջ<br>30 | 73<br>Որսորդ<br>24 | 81<br>Գայլ և Շուն<br>98 | 89<br>Առիւծ ի բաժնի<br>12 |
| 66<br>Հ<br>85 | 74<br>Ջ<br>95 | 82<br>Ս<br>97 | 90<br>Ց<br>91 |
| 67<br>Աշտանակ<br>20 | 75<br>Շոգենաւ<br>45 | 85<br>Ամերիկա-ցի<br>26 | 91<br>Ի<br>25 |
| 68<br>Ո<br>79 | 76<br>Եղջերու<br>59 | 84<br>Վ<br>88 | 92<br>Բորենի<br>39 |
| 69<br>Դամբա-րան<br>51 | 77<br>Մկանք<br>69 | 85<br>Դահուկ<br>54 | 93<br>Փ<br>70 |
| 70<br>Չ<br>16 | 78<br>Ռ<br>6 | 86<br>Տ<br>84 | 94<br>Նուագա-րան<br>52 |
| 71<br>Նաւ<br>49 | 79<br>Կռունկ և Գայլ<br>100 | 87<br>Գայլ և Գառն<br>26 | 95<br>Ք<br>89 |
| 72<br>Պ<br>96 | 80<br>Այծ և Աղուէս<br>64 | 88<br>Ր<br>93 | 96<br>Խարխալ<br>4 |

| 97 | 98 | 99 | 100 |
|---|---|---|---|
| Օ | Արև | Փ | Թվանշանք |
| 8 | 1 | 58 | 99 |



## ՎԻՃԱԿԻ

### ՊԱՏԱՍԽԱՆԻՆԵՐ

Մանկունք՝ քան թէ անկարգ ման գաք,
Լաւ է՝ որ այս թղթով խաղաք
Ո՛չ թէ վիճակ հաւատալով,
Այլ գրերանց մէջ գտանելով:

# ԽՐԱՏ ՎԻՃԱԿԱԽԱՂԻ

ԵՐԲ-էլ կամենաս ՎԻՃԱԿ բանալ,
առ մէկ հատիկ փոքրիկ գնդակա
նման բոլորակ կամ սիսեռ, կամ
ցորեն, կամ հացի կակուղ միջուկէն կլորա-
ցուցած ուլեռի չափ գնտակ, և մտքումդ
խորհուրդ դնելով, և որպէս թէ հարցնե-
լով, երկու մատով բռնած բոլորակ հատի-
կը, վերէն դէպ-ի-վայր գլորէ՛ առաջին աղ-
իւսակի վերայ, որոյ ճակատին գրուած է՝
'կենաց Աղիւսակ և Բաղդի Վիճակ, և նոյն
թուահամարը գտի՛ր հետևեալ աղիւսակի
երեքկարգեան տուփերումը, որոնց մէջ կան
երկու թուանշանք, մէկը՝ վերը, միւսը՝ ցա-
ծը. իսկ մէջ-տեղումը կան գրած զանազան
թռչունների, գազանների, անասունների և
ուրիշ իրեղինների անուն. կամ լոկ Հայոց
ազգային Այբուբենի տառեր։ Սոցա ըստո-
րին. թուանշանով և անուններով կըգտնես
խորհած հարցմունքիդ պատասխանը՝ որ կը-
լինի համանգամայն և վիճակ։

## 1 ԱՐԵՒ



Խառնակ օրեր կ՚անցնին կ՚երթան,
Կուգայ հանդարտ պայծառ օր.
Քեզմէն չարիք կըհեռանան,
Դու-էլ կըլնիս բաղդաւոր։

## 2 ԵԶՆ



Գիտեմ հոգիդ վշտացած է,
Համբերութեամբ դիմացիր.
Չար վիճակըդ անցաւոր է
Աջող բաղդիդ ըսպասիր։

## 3 Ա.

# Ա

Թէպէտ շատ են թշնամիքըդ,
Բայց փաս տալ չեն կարող․
Արթուն, զգոյշ կացիր ինքըդ,
Մի՛շտ-էլ կըլնիս դու յաղթող։

## 4 ԽԱՐԻՍԽ



Ծո՛վըդ երբէք խաբուելու չէ,
Լաւութիւնըդ պըտղաբեր.
Ճշմարտութիւն կորչելու չէ,
Համեստին միշտ շահաբեր։

## 5 ԱՐԱԳԻԼ



Շատ կը քաշես դժուարութիւն,
վերջը պիտի յաջողիս.
Ունեցիր խելք, համբերութիւն,
կ'առնես պըսակ յաղթողի:

## 6 Ու

Ո

Դու աւելի շատ կուզենաս,
Թէ հեռանաս վատ մարդէն.
Նա իւրն-էլ է տալիս վընաս,
Քեզ էլ ինչ յոյս անոյմէն:

## 7 ԳՈՐՏ



Ի՞նչի ես դու լաւ խըրատը
Սըրտիդ մէջը անարգում.
Ու թողնելով ճըշմարիտը՝
Ծուռ ճանփաներ պըտըտում:

## 80

# Օ

Քու գլուխըդ չես խընայում
Ու մատնում ես միշտ չարին,
Ջուրը հիւանդ է միշտ մընում,
Նա չի տար կեանք օտարին:

## 9 ԼՈՂՈՐԴ



Թէ հիւանդ ես՝ կ՚առողջանաս,
Թէ խեղճ ունիս՝ կըստանաս.
Հաւատա՛ ինձ՝ որ կայ խնամող,
Եւ քո օգուտդ պահպանող։

## 10 ՋԱՅԼԱՄՆ



Խորհուրդ չեմ տար ես երթալըդ,
Ամեն-օր չի յաջողիր.
Իսկ թէ սանձես ըշտապելըդ,
Գուցէ յոյսդ-էլ չի խաբիր։

## 11 Ղ



Կան առջևըդ բազդ, Ճոխութիւն,
Տե՛ս՝ որ ձեռքէդ չըփախչին,
Ագահութիւն, գոռոզութիւն
կործանել են շատ շատերին։

## 12 ԱՌԻՒԾ Ի ԲԱԺՆԻ



Միտքըդ տուել ես դու չարին,
Վերջըդ ի՞նչ է՝ չը գիտես.
Նաւըդ յանկարծ կուգայ քարին,
Առջևդ առիւծ կըտեսնես։

## 13 ԱՂՈՒԷՍ



Թէ և գայ քեզ անբաղդութիւն,
Յոյսըդ բընաւ մի՛ կըտրիր.
Կայ ծածուկ-էլ ողորմութիւն,
Սիրտըդ ուրախ միշտ պահիր

## 14 ԱՂԱՒՆԻՔ



Չարութիւնէն միշտ հեռո՛ւ կաց,
Նա մէկ օ՛ձ է թունալի.
Քեզ պահապան աղբիւր բարեաց,
Ամեն գործոցդ հովանի.

## 16 ԾԻԾԵՌՆԻԿ



Վշտացրել է քեզ. համբերէ՛,
Զղջացած է նա արդէն.
Ոխ, բարկութիւն սրտէդ հանէ՛,
Թո՛ղ քո բարիք քեզ օգնեն:

## 16 Ձ

# Ձ

Հոգւոյդ մէջ կայ խռովութիւն,
Բայց դու բընաւ մի՛ վախեր.
Տրտմութեան տեղ ուրախութիւն
Կուգայ շուտ՝ մի՛ երկմըտեր:

## 17 ՕՁ



Ատեցել է յաջողութիւն,
Գործըդ առաջ շուտ կ'երթայ.
Թշնամիդ էլ քեզ յարգութիւն
Չուզենայ-էլ՝ պիտի տայ։

## 18 ԿՈՎ



Ձեռք մի' քաշիր լաւութիւնէն,
Վատ գործն առաջ չի երթար.
Չար դուրս կուգայ ամեն չարէն,
Բարին անյայտ չի մնար։

3969

# 19 Հ



Բարի արա՛ թէ՛ և ծածուկ,
Կը յաջողի քեզ գործըդ․
Ո՛չ հոգ կըլնի և ո՛չ տաղտուկ,
Երբ միամի՛տ է սիրտըդ։

# 20 ԱՇՏԱՆԱԿ



Թէ արարքըդ գիտեմ՝ լաւ չե՛ն
Ջըջալէն մի ամաչեր․
Խղճմըտանքըդ թէ մաքուր չեն,
Հոգւոյդ հանգիստ մի՛ կարծեր։

## 21 ԳԱՅԼ և ԳԱՌՆ



Հեղութեամբ քան թէ բռնութեամբ
վերջ կըդըրվի ադոնին։
Թէ չես բռնած հըզօր ձեռամբ
Զէն ու սուսեր ի մարտին։

## 22 Գ

# Գ

Գործըդ կ՚առնու նոր ուղղութիւն,
Թէ յուսով չը մոլորվիս ·
Զուտ կըհասնի քեզ օգնութիւն՝
Ինչ տեղից որ յոյս ունիս.

## 23 ՀՈՂԱԳՈՐԾ



Դժուարութիւն շատ ես տեսնում
Քո ձեռնարկած գործումը.
Վասն այն շատ-էլ եմ վախենում,
Որ չը մնաս կէս ճանփումը։

## 24 ՈՐՍՈՐԴ



Այդ ընկերէն՝ որ քեզ հետ է,
Ուրիշ բան մի՛ ըսպասիր.
Կաց ու կեր, հետ պհեստ
Տրտունջ, չփոթ ու թասիր։

## 25 Ճ

# Ճ

Միայն բարին է ճոխութիւն,
Մէջը չարիք մի՛ խառնիր.
Վաստակիդ հետ արդարութիւն
Քանի կարես պինդ կապիր:

## 26 ԱՄԵՐԻԿԱՑԻ



Ելումուտքդ կայ նշմարող,
Քեզ՝ անյայտ ոմն մի՛ համրիր.
Ամէն քայլըդ կայ համարող,
Սուտ բաղդին մի՛ վստահիր:

## 27 ԱՅԾ



Ինչ ուրիշին կըցանկանաս՝
Այն է միայն քո բաժին.
Ժուժկալութիւն թէ ունենաս՝
Կըհասնիս քո բաղձանքին:

## 28 Ր

# Ր

Կը կատարուի քո ցանկութիւն,
Բայց ոչ այնքան փոյթ, արագ.
Չէ երեւում ընդդիմութիւն,
Հանգամանքն են հակառակ:

## 29 ԱՔԱՂԱՂ



Քեզ սպասում են խնդութիւն,
Յաջողութիւնք և բարիք.
Հանէ՛ սրտէդ ատելութիւն,
Զունխս անոր մէկ կարիք:

## 30 ՓՈՒՆՋ



Հիւանդ տեղէդ առողջութիւն,
Տրտմութենէդ խընդութիւն,
Երախտիքըդ կորչելու չէ,
Ամէն արածդ առջևդ է:

## 31 ՅՈՊՈՊ



Մի՛ յոյս դընէր խոստմունքներին,
Աշխատանքիդ վըստահիր.
Խոստմամբք խաբել են շատերին,
Ջանքըդ միայն ճանաչիր,

## 32 ՎԱՐԴ



Ի՞նչ կայ հաստատ աշխարքումը,
Ջուր է ապա ջանալըդ,
Ես-էլ էի դարդ այգումը,
Ինձ Թոռմեցուց ձեռ տալըդ։

## 33 Յ

# Յ

Յամբերէ՛ որ բանը փոխուի,
Ու թախիծըդ հեռանայ
Ճշմարտութիւնն կըպըսակուի,
Երբ մութ գիշեր լուսանայ։

## 34 ԴԱՀՈՒԿ



Օգնութիւն .քեզ շատ տեղից կայ,
Փրկութիւնըդ մօտիկ է-
Նեղութիւնդ-էլ կըհեռանայ
Վարձըդ առատ վիճակ է։

## 35 ԼԱՊՏԵՐ



Պիտի ներես քու թշնամեաց՝
Որ նոքա-էլ քեզ ներեն.
Ներողութիւնք դէմ ատելեաց՝
Խաղաղութիւն կբերեն:

## 36 ԱՒԱՆԱԿ



Մի՛ կարծեր՝ թէ շուտ կըստանաս,
Ի՛նչ իղձ ունիս սրտումըդ,
Զգուշացի՛ր՝ չառնուս վնաս,
Շատ արգելք կան ճանփումըդ:

## 37 Կ



Կառնուս սրտիդ լաւ բաղձանքը,
Միամի՛տ կաց դու իսպառ,
Միշտ մեր վերայ է երկինքը,
Ողորմութիւնն անսպառ:

## 38 ՇՈՒՆ



Մի՛ վախենար փոթորիկէն.
Բաց Աչքն է քո պահապան.
Նա կըփրկէ քեզ փորձանքէն,
Նա է միշտ քո օգնական:

## 39 ԲՈՐԵՆԻ



Յանձնի՛ր զքեզ քո վիճակին.
Բարի կըլնի քո վերջը.
Ազգականաց քաղցր խօսքին
Կը հասնի քո ականջը։

## 40 ՀՐԵՇՏԱԿ



Ցանկութիւնիդ շուտ կըհասնիս,
Զգուշութիւն ունեցիր.
Ընդդէմ ալեաց պիտի շարժիս,
Վաստակդ ի՞նչ է՝ իմացի՛ր։

## 41 ՑՈՒԼ



Ուժաւոր են թշնամիքըդ,
Մի՛ վախենար նոցանից,
Հասկացի՛ր* որ մեծ վըտանգըդ·
Միշտ պատրաստ է քո գործքից։

## 42 Ւ



# Ւ

Հանգիստ կեցի՛ր՝ թէ գործքերըդ,
Արդարութեամբ ես բռնել·
Ջո՛ւր են անխելք ոսոխներըդ
Ոտներուդ լար երկայնել,

## 43 ՇՈԳԵՆԱՒ



Էյդ փնասը՝ որ քաշում ես,
Բարեկամեդ է հասել.
Գործըդ փոխուած շուտ կըտեսնես,
Էլ չէ կարող վընասել:

## 44 ՊՏՈՒՂՔ



Չարը բարի կը փոխարկուի.
կառողջանայ հիւանդը.
Քո բաղձանքն-էլ կըկատարուի,
կառնուս սիրոյ աւանդը:

## 45 ՈՉԽԱՐ



Անտքըդ բարի է՝ զգում եմ,
Կըյաջողի խորհուրդըդ.
Մի՛ երևիր շատ յետադեմ,
Գործքիդ յարմար բե՛ր խօսքըդ:

## 46 Ճ



Լաւ կասէի քո խորհուրդը,
Թէ որ լինէր օգտաւէտ,
Մի՞ թէ սանձի արձակուրդը
Ամեն տեղ է շահաւէտ:

## 47 ԷՇ



Ի՞նչ պատճառով ես ծուլանում,
Թէ ուզում ես հաց ուտել.
Նա է միայն հացի հասնում,
Ով յօժար է աշխատել:

## 48 ՏՈՒՆ



Առաջ հոգւոյդ հոգսը քաշէ,
Յետոյ ուրիշ գործերուդ.
Եթէ փորըդ քաղց կըմաշէ,
Ուժ չկայ քո ձեռներուդ:

## 49 ՆԱՒ



Նոաւքինի քո գործքերը
Թէ են բազմաց ըսփոփանք,
Միւս կողմը կան շատերը
Որոնց համբաւդ է Թախծանք։

## 50 Է

# Է

Պատրաստ է քո ճանապարհը,
Դուռը բաց է առջեւըդ.
Ուղղէ՛ ոտքըդ դէպ այն տունը,
Բաղդ կանգնած է դիմացըդ։

## 51 ԴԱՄԲԱՐԱՆ



Խնդութիւն և յաջողութիւն
Առջևըդ կան հանդստեամբ.
Մերժէ՛ քեզմէն երկմըտութիւն,
Կեանքըդ անցուր բերկրութեամբ:

## 52 ՆՈՒԱԳԱՐԱՆ



Մ՛եր կեանք ծով է ալեկոծուած,
Լցուած շատ շատ վըտանգօք.
Դու էլ կեցիր ըզգուշացած,
Որ չը գտանաս այլոց հոդ:

## 53 ՁՈՒԿՆ



Ըլլոյ բարի ես միշտ արել,
Բարութեան-էլ ըսպասէ՛.
Բարեգործը չէ՛ զղջացել,
Աշխարհ բարեաց հանդէս է։

## 54 Խ

# Խ

Լխացած ես ամէն կողմանց,
Դարձեալ քաղցըդ անյագ է . . . .
Մատնըւած ես չար ցանկութեանց,
Աչքըդ անկուշտ ու ծակ է։

## 57 ԹՈՒՐ



Ճշմարիտ են քո կարծիքը,
Բայց գիտեն-էլ սխալուիլ.
Օգուտ, վընաս, սուկ դիպուածքը
կարեն յայտնող համարուիլ։

## 58 Գ




Դու արդար ես, չես յանցաւոր,
Պարտիս վստահ միշտ մնալ.
Յոյսդ հաստատ և հիմնաւոր,
կարէ անկեան վէմ դառնալ։

## 55 ԳԱՅԼ



Մի՛ ըսկըսիր դու այդ գործը,
Որ մըտքումըդ դըրել ես. . . . ;
Քո համար չէ վիճակածը,
Դու այլոց դեր առել ես:

## 56 ԼՈՒՍԱՑԱՐԱՆ



Խաբեբայ են մեր յոյսերը
Հիմնած միայն մեր մըտքին.
Խակ են նոցա պըտուղները,
Ապաստան են մեր խելքին:

## 59 ԵՂՋԵՐՈՒ



Լի՛ է աշխարհ չար թիւրութեամբ,
Բայց դու նորան մի՛ դատեր.
Ինքըդ միայն ըզգուշութեամբ
Քեզ չարութեան մի՛ մատներ։

## 60 ՍԱՆՏՐ



Մենք չենք կարող առաջմանէ
Գուշակել մեր ապառնին . . .
Ո՞վ գիտէ թէ ինչ պատրաստէ
Վերահաս ժամ մեր գլխին։

## 61 ԶԱՆԳԱԿ



Ցանկացածըդ շուտով կ՚առնուս,
քեզ մի՛ մաշիր հոգսերով.
Մի՛-էլ խաբուիր, դու չես անուս,
կեղծաւորի խօսքերով:

## 62 Ե



Ի՞նչ ես մաշուում զուր մըտածմամբ.
կատարուած է խորհուրդըդ.
Մի՛ դանդաղիր դու ծուլութեամբ,
Ուրախացո՛ւր քո սիրտըդ:

## 63 ԽՈԶ



Համբերութեամբ պիտի քաշենք,
ինչ մեր վերայ կըհասնին.
Հակառակ կալ մենք ոչ կարենք
Անդառնալի օրհասին։

## 64 ԱՅԾ և ԱՂՈՒԷՍ



Պէտք չէ՛ ընաւ կըտրել յոյսը
Ուրախ, յաջող օրերից.
Արեգական պայծառ լոյսը
Ծագէ մութ մութ ամպերից։

## 65 ՄԱՆՈՒԿ



Լ՛եր մարդասէր, հեզ, համբերող,
Իրաւասէր, չարատեաց. . . . . .
Պակասութեանց այլոց ներող.
Կըհասանիս դու բարեաց,

## 66 Ձ

Հըպատակ ես սուրբ օրէնքին,
Ճշմարտութիւն ես սիրում.
Սըրտով ատող ես դու չարին,
Եւ լեզուաւ չես մեղադրում։

## 67 ԸՆՁՈՒՂՏ



Խղճմըտանքն է լոյս աշխարհի,
Նորա ճանփէն դուրս մի՛ գար.
Նա է քեզ-էլ շող լապտերի,
Աչքէդ ծածուկ չի մընար։

## 68 ՃՆՃՂՈՒԿ



Յոյսդ հաստատուն տեղ ես դըրել,
Մի՛ երկբայիր քո գործէդ.
Նըպատակդ ես բարին արել,
Յետ մի՛ կենար խորհուրդէդ։

## 69 ՄԿՈՒՆՔ



Թէ խորհուրդըդ բարի բան է,
Մի՛ վախենար, առա՛ջ տար.
Ապա եթէ վատ վախճան է,
Շատ կարճ օրեր տեւէ չար ։

## 70 Փ

# Փ

Թշնամուդ սիրտ նախանձուելով՝
Բորբոքուած է քո վերայ . . . .
Ջո՛ւր է երկիւղդ շփոթուելով . . . .
Կը բթանան զէնք նորայ։

## 71 Դ

# Դ

Գընա՛ ճանփադ խաղաղութեամբ,
Աջողա՛կ է երթալըդ . . . . .
Բաղդըդ ահա իւր օգնութեամբ
Ցեմնում է քո խընդալըդ ։

## 72 Ի

# Ի

Մեծամըտուիր մի՛ քո խելքով,
Եւ ո՛չ ձըրիւք, ճոխութեամբ.
Միտքըդ բե՛ր որ դու քո անձնով
Չես հըզօր ոք զօրութեամբ։

## 73 Ն

# Ն

Թէ նախախնամ տեսչութեանն են
Ապաստան քո յոյսերը . . .
Միամիտ կաց , կատարուած են
Քո ամէն լաւ իղձերը:

## 74 ՄԵՂՈՒ



Ինչ ցանկութիւն որ ունէիր՝
Ահա՛ գլուխ է գալիս . . .
Ինչ օգուտ որ պտրում էիր,
Այժմէն ձեռքըդ են տալիս:

## 75 Ը

# Ը

Վերին խնամոց յոյս դընողը
Երբ է դատարկ մընացել. . .
Նորա ճանփով ման եկողը
Երբ է անյոյս դընացել։

## 76 Ծ

# Ծ

Ծոյլ ես, այլոց մի՛ մեղադրեր,
Ծուլութիւնը վընաս է. . .
Բնութիւն տուել է քեզ ձեռներ.
Ձեռքդ էր ծոցումդ պահած է։

## 77 Ո

Եթէ կուզես շահ ըստանալ,
Դու՛-էլ այլոց օգուտ տուր.
Թէ ցանկանում ես կշտանալ,
Առաջ եփէ՛ կերակուր. . . .

## 78 ԿԱՆԹԵՂ.



Եթէ կասկած ունիս գործէն,
Մի՛ ըսկըսիլ շտապմամբ. . . .
Զգուշութիւն պիտի քեզմէն,
Ծառ չէ ծաղկում ըստիպմամբ:

## 79 Ռ

# Ռ

Երկմըտութեան մէջ ես ընկած՝
Կարօտ այլոց խորհուրդին . . .
Խորհըրդատուաց մեծն է Աստուած ,
Լըսէ՛ նորա պատգամին :

## 80 Չ

# Չ

Մի՛ առնուր սանձ խորհուրդներուդ,
Նըրանց ազատ մի՛ թողցուր. . .
Շատ օգուտ չեն քու գործերուդ . . .
Մէ.քիչ խելքիդ ել հարցուր:

## 81 Ժ

# Ժ

Ժամանակդ թանկագին է,
Գո՛րծ դիր դու այն՝ քո օգտին.
Յաջողութիւնդ քո ձեռին է,
Էլ մի՛ յանձնիր կոյր բաղդին։

## 82 ԵԿԵՂԵՑԻ



Երկայն օրեր, կեա՛նք ու արև
Քո առջև կան պատրաստուած.
Շընորհ երկնից է արդարև
Ի հատուցումն քոց բարեաց։

83 Թ



Վախենում ես այդ ճանփայէն,
Միտք զարհուրանք է բերում.
Յոյսըդ մի՛ հատցուր քո սրտէն,
Բաղձն է ահա՛ ձեռք բռնում։

84 Տ



Եթէ առաջ դըրիր մտքիդ,
Ցանկութեանըդ հասանիլ,
Զգուշացիր սըխալմունքից
Շատ դէպք կարէն բուսանիլ ։

## 85 Ծ

# Ծ

Դեռ կարելի է ակն ունել
Որ փափագըդ կատարուի .
Ժամանակը չև է անցել,
Շատ միջոց կըհընարուի ։

## 86 ԴԱՆԱԿ



Ըռանց երկք երկբայութեան
Ժամանակին ըսպասիր .
Մերձ է կատար քո ցանկութեան,
Բաղձիդ ազատ վըստահիր ։

## 87 Մ

# Մ

Մի՛ կարծեր թէ քեզ կըմընայ
ինչ որ մօտըդ պահել ես.
կամ թէ տէրը կըմոռանայ՝
ինչ որ ծոցըդ դըրել ես ։

## 88 Վ

# Վ

Ծածկած են մեր աչքէն, մըտքէն
Ամեն խորհուրդ տեսչութեան.
Ո՞վ կիմանայ իրայ խելքէն
Թէ ի՛նչ ունի ապագան ։

## 89 ք

## Ք

Չըշփոթուի թո՛ղ քո սիրտը
Չըվըհատի քո հոգին. . . .
Չարագուշակ բաղդի մատը
Չընէրգործէ քո սըրտին:

## 90 իժ



Բարի պիտի անես մարդկան,
Ո՛չ թէ նըրանց վընասես. . . .
Թէ ցանկանում ես լաւ անուան,
Մարդ պիտի չըբամբասես:

## 91 Ց

# Ց

Մեղք թէ ունիս՝ շուտ զղջացիր,
Զղջումը մեծ ամօթ չէ.
Գալու մեղքէն ըզգուշացիր,
Օրհնութիւնը հեռու չէ.

## 92 ԲՈՒ



Ինչ դըրած է տեսչութենէն
Մեր ընթացքին չափ, սահման,
Կարող չէ ոք այն կողարէն
Անցնել յայնկոյս ինքն-իրան։

## 93 Ո

# Ո

Ինչո՞ւ պիտի լոյս չունենաս,
Թէ յետ ձախորդ դիպուածի,
Դու շատ խնդուն օր կ'ունենաս,
Քեզ այց կ'առնէ աչք բաղդի:

## 94 ՀԱՒ



Կամեցածիդ պէս կըլինի
Քո խորհուրդի կատարած.
Միայն պիտի ժամանակի
Ըլլի մէքիչ ըսպասած:

## 95 Ձ

# Ձ

Համբերէ՛ ու մի՛ երկմըտիր. .
Քո համար շնորհ պատրաստ է.
Քո բաղդէն մի՛ յուսահատիր ,
Բաղդըդ դռնում կանգնած է։

## 96 Ղ

# Ղ

Աշխատանքըդ զուր կ'անցանէ,
Մի՛ ակն ունիր կոյր բաղդի. . .
Ցանկացածըդ այլոց ձեռքն է,
Զոհ շատ կուտաս թարց օգտի :

## 97 Ս

Ս

Ուժըդ ժողվէ՛, սի՛րտդ ամրացուր,
Առա՛ջ գընա համարձակ . . .
Թշնամեացըդ ամաչեցո՛ւր,
Քաջաց ճանփան է արձակ:

## 98 ԳԱՅԼ և ՇՈՒՆ



Այս աշխարքում խառն ի խուռն են,
Տժգոհութիւն, ընկլութիւն,
Ամենայն տեղ ձեռք ձեռքի են
Խըռովութիւն, հաշտութիւն:

## 99 ԹԽՍՄԱՅՐ



Լըսէ՛ խորհուրդ խոհականաց,
Ո՛րքան կարես՝ քի՛չ խօսիր.
Շատախօսի դըռներն են բաց.
Դու նըրան մի՛ նըմանիր:

## 100 ԿՌՈՒՆԿ և ԳԱՅԼ



Ըմեն գործիդ ըսկըզբումը
Վերջը պիտի միտք անես.
Սըրտիդ, հոգուդ ցանկութիւնը
Վախճանիդ հետ յարմարես:

Ռափայէլ Պատկանեանի Տպարանի

լոյս ընծայած գրեանք:

## ՑՈՒՑԱԿ

1) «Նոր Այբբենարան Հայկական» աշխատ. Ռափ. Պատ. 30 կոպ:

2) «Լիակատար Երգարան» աշխ: Գամ. Քաթ. 1 ման:

3) "Ռոբինզօն Կռուզօյի Պատմ". Թարգմ. Գամ. Քաթ 60 կոպ:

4) «Եզոպոսի Առակները» աշխա, Գամ: Քաթ. 25 կոպ:

5) «Մեծին Պետրոսի Պատմու». աշխ. Գամ. Քաթ. 1 ման 35 կոպ:

6) «Միջնավէտուք Երասխէն Հայոց գաղթականաց անցքը. Նոր Նախիջեւանի հիմնարկութիւնը 40 կոպ:

7) «Հայոց Ազգի Պատմութիւնը» աշխ. վերջը կիմանաք. 1 ման. 50կ:

8) «Վարդան Մամիկոնեան» և

9) «Տաւարշ» 40 կոպ:

10) «Նիկոլ» 1 ման:

11) «Ուսումնարանք և Ուսուցիչք:

12) «Համաշխարհական Պատմութ:

Дозволено Цензурою 10 Мая 1865

С.П.БУРГЪ.

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1953 թ.